

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» -----2018թ

N -----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի
N 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի **04.09.2018թ. հ.1-3-02** գրությունը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի **33-րդ** հոդվածի **1-ին** մասի **1-ին** կետը և **34-րդ** հոդվածի **1-ին** մասը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի դեկտեմբերի **26-ի** «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» **N 98-Ա** որոշման **2-րդ** կետի **3-րդ** ենթակետում « **2018** թվականի սեպտեմբերի **25-ը**» բառերը փոխարինել «**2019** թվականի մայիսի **1-ին**» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի **2800**-ամյակին նվիրված՝ «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի՝ Երևան քաղաքի Ա.Սյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ.Լուսավորչի փողոցների սահմաններով պարփակված այգու բարեկարգման նպատակով իրականացվելիք շինարարական, այդ թվում՝ շատրվանների կառուցման աշխատանքների արդյունքը Երևան համայնքին նվիրաբերելու առաջարկին հավանություն է տրվել Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի դեկտեմբերի **26**-ի **h.98**-Ա որոշմամբ:

Ավագանու նշված որոշման հիման վրա Երևան համայնքի և «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի միջև **26.12.2017**թ.կնքվել է նվիրաբերության պայմանագիր:

Նշված որոշման **2**-րդ կետով նախատեսվել է «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի հետ կնքվելիք նվիրաբերության պայմանագրի պայմանները, որոնցից մեկով նախատեսվել է, որ շինարարական և բարեկարգման աշխատանքները «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պարտավորվում է իրականացնել մինչև **2018** թվականի սեպտեմբերի **25**-ը:

«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի **04.09.2018**թ **h.1-3-02** գրությամբ ներկայացվել է առաջարկ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի և Երևան համայնքի միջև **26.12.2017**թ. կնքված նվիրաբերության պայմանագրի **1.4**-րդ կետում փոփոխություն կատարելու վերաբերյալ, որով աշխատանքների կատարման ժամկետը **25.09.2018**թ. փոխարեն կնախատեսվի **01.05.2019**թ.

Վերը նշված գրությամբ պատճառաբանվել է, որ այգում կատարվելիք աշխատանքները պայմանավորված են մի շարք երկրներից ապրանքների մատակարարման և ներմուծման հետ, և քանի որ այգու բարեկարգման և հիմնանորոգման ծրագիրը ճանաչվել է բարեգործական, որը հնարավորություն է տալիս օգտվելու հարկային արտոնություններից, Հիմնադրամի կողմից ստացված բեռները նշված ծրագրի շրջանակներում բարեգործական ճանաչելու նպատակով վերջինիս դիմել է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

Հանձնաժողովի լիազորությունները կապված «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի հետ՝ ընդունված **21.06.2018** թվականին դադարեցվել են, որի արդյունքում բեռները բարեգործական ճանաչելու վերաբերյալ դիմումների քննարկման և համապատասխան որոշումների ընդունման գործընթացը ձգձգվում է, իսկ բեռները գտնվում են մաքսային պահեստներում: Կատարվածի արդյունքում Հիմնադրամի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունները սահմանված ժամկետում կատարելը դարձել է անհնարին, այգում աշխատանքները մասամբ դադարեցված են: Բացի այդ, շինարարական աշխատանքների ավարտին այգու տարածքում նախատեսված է նաև շատրվանային համալիրի կառուցում, որի աշխատանքների կատարումը ստանձնել է ռուսական

«ՎՈՂԱԼՅՈՒՔՍ» ընկերությունը: Վերջինս, հիմք ընդունելով շատրվանների միացման տեխնիկական կանոնակարգը, նպատակահարմար չի գտնում իրականացնել շատրվանների միացման աշխատանքները նոյեմբերից-մարտ ամիսների ընթացքում՝ հաշվի առնելով եղանակային պայմանները:

26.12.2017թ. կնքված նվիրաբերության պայմանագրում առաջարկվող փոփոխությունը կարող է կատարվել Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի դեկտեմբերի **26**-ի **հ.98**-Ա որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի դեկտեմբերի **26**-ի N **98**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի դեկտեմբերի **26**-ի N **98**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը ընդունելու կապակցությամբ Երևանի **2018**թ. բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ